Հեռախոսահամար` (626) 458-5100

Էլ.հասցե` DPWinfo@dpw.lacounty.gov

Մատենավար-Գրանցող/ Շրջանի Զարտուղար (Registrar-Recorder/County Clerk)

Ծառայություններ` Թեկնածուների Հայտերի Ընդունում, Զարգաբաշխի ֆինանսավորում, Ընտրությունների Ռեսուրսների և Տեղեկությունների Տրամադրում, Ծնունդների, Մահերի և Ամուսնությունների Գրանցում, Անշարժ Գույքի Սեփականության Գրանցում, Անշարժ Գույքի հետ կապված Գործողությունների Գրանցում, Կեղծ Բիզնեսի Անունների Գրանցում/DBA, Ամուսնությունների Թույլտվությունների Տրամադրում և Արարողությունների Կատարում:

Հեռախոսահամար` (800) 201-8999

Էլ.հասցե` recorder@rcc.lacounty.gov

Գանձապետարան և Հարկահավաք Մարմին (Treasurer and Tax Collector)

Ծառայություններ` Գույքահարկի Վճարում, Գույքահարկի Վերաբերյալ Ընդհանուր Հարցեր, Բիզնեսների Արտոնագրերի Տրամադրում, Աճուրդներ, Գույքի Նկատմամբ Կալանք, և այլն:

Հեռախոսահամար` (213) 974-2111

Էլ.հասցե` ttc.lacounty.gov/public-inquiries/

Բոլոր այլ հարցերի դեպքում դիմեք Լոս Անջելեսի Շրջանի Հեռախոսավարին (Օպերատոր) հետևյալ հեռախոսահամարով` (213) 974-1234:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ

Ներկայացված են այբբենական կարգով՝ ըստ գործակալության/վարչության:
Տե՛ս ինդեքս բաժինը ծառայության որոնման համար

211 Լոս Անջելեսի Շրջան (211 LA County)

Կայք՝ 211la.org

Ամբողջ Լոս Անջելեսի Շրջանի համար.....2-1-1
Ովքեր անկարող են կապ հաստատել 2-1-1 ծառայության հետ.....(800) 339-6993
Հեռատիպ (TTY/TDD#) (լսողության խանգարում ունեցող անձանց համար)....(800) 660-4026

Տրամադրում է անվճար տեղեկություններ մարդկանց տրամադրվող ծառայությունների վերաբերյալ, ներառյալ մեծահասակներին տրամադրվող ծառայությունները, խորհրդատվությունը, իրավաբանական աջակցությունը, ֆինանսական աջակցությունը, ուսուցումը/վերապատրաստումները, հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող ծառայությունները և այլ սոցիալական ծառայություններ՝ 24/7:

988 Ինքնասպանությունների և ճգնաժամային Աջակցության Թեժ Գիծ (988 Suicide & Crisis Lifeline)

Կայք՝ 988lifeline.org

Ամբողջ Լոս Անջելեսի Շրջանի համար.....9-8-8

Վերապատրաստված հեռախոսավարները կգնահատեն զանգահարողների հոգեվիճակը և կուղղորդեն համապատասխան ծառայությունների, ինչպես նաև հեռախոսով կտրամադրեն ինքնասպանության թեմայով ճգնաժամային խորհրդատվություն և կմեղմեն զանգահարողի հոգեկան վիճակը:

Ծերացող և Հաշմանդամություն Ունեցող Անձանց Վարչություն (Aging & Disabilities)

510 S. Vermont Ave., 11th Floor, Los Angeles 90020.....(213) 291-0028

Կայք՝ ad.lacounty.gov

Էլ.հասցե՝ info@ad.lacounty.gov

Տեղեկատվության և Աջակցության Թեժ Գիծ՝.....(800) 510-2020
Տարեցների և Կախվածություն Ունեցող Մեծահասակների Թեժ Գիծ՝.....(877) 477-3646
Համայնքային Կենտրոններ և Ծերանոցներ՝.....(800) 689-8514
Հաշմանդամություն Ունեցող Անձանց Տեղեկատվության և
Ծառայությունների Հասանելիության Գիծ՝.....(888) 677-1199
Անկախ Փոխադրումների Նոր Ծառայության Թեժ Գիծ՝.....(888) 863-7411
LA FOUND՝.....(833) 569-7651

Լոս Անջելեսի Շրջանի Ծերացող և Հաշմանդամություն Ունեցող Անձանց Վարչությունը (AD) կարևորում է ծերերի և հաշմանդամություն ունեցող անձանց արժանապատվությունը և անկախությունը՝ Ծերացող Անձանց Աջակցող Տարածաշրջանային Գործակալության (Area Agency on Aging), Մեծահասակների Պաշտպանության Ծառայությունների (Adult Protective Services), սննդաօգնության ծրագրերի, անվճար փոխադրման ծրագրերի, անօթևանության կանխարգելման, թվային տեխնոլոգիաների ներգրավման և այլ նորարարական ծառայությունների միջոցով: AD-ն նաև ծառայություններ է մատուցում հաճախորդներին տեղի 14 համայնքային կենտրոններում և ծերանոցներում՝ տարբեր սերունդներին տրամադրվող ծրագրերի միջոցով: AD-ի կազմում են գտնվում Լոս Անջելեսի Շրջանի Տարեցների Հանձնաժողովը և Հաշմանդամություն Ունեցող Անձանց Հանձնաժողովը:

Գյուղատնտեսական Գծով Հանձնակատար/Քաշեր և Չափեր (Agricultural Commissioner/Weights & Measures)

12300 Lower Azusa Rd., Arcadia 91006.....(626) 575-5471
Կայք՝ acwm.lacounty.gov

Ապահովում է օրենքների կիրառումը, որոնք ուղղված են վնասակար միջատների, կրծողների, թռչունների, գիշատիչ կենդանիների, մոլախոտերի և բույսերի հիվանդությունների առաջացումը և տարածումը կանխելու, կարգավորում է թունաքիմիկատների օգտագործումը մասնավոր անձանց և մասնագետների կողմից, հավաքում է բերքի մասին տվյալներ, վերահսկում է արտադրանքի (միդգ/բանջարեղեն) և հավկիթների որակը, ստուգում է ողջ Շրջանում առևտրի մեջ օգտագործվող բոլոր կշեռքները և հաշվիչները, ստուգում է մեծածախ և մանրածախ ապրանքների փաթեթավորումը՝ մակնշման ճշգրտության և գովազդվող գների միջև համապատասխանության ապահովման համար և քննում է նման խնդիրների վերաբերյալ բողոքները, պաշտպանում է մարդկանց կյանքերը, ինչպես նաև շինություններն անտառային հորդեհներից՝ մաքրելով ամայի տարածքների մոլախոտերը, բուսածածկ տարածքները և թափոնները Ոչ Ինքնավար համայնքներում և Շրջանի հետ պայմանագիր ունեցող քաղաքներում: Տրամադրում է Էկոլոգիապես հարմար լուծումներ մերձքաղաքային բնության պահպանման և ինվազիվ տարածվող մոլախոտերի դեմ պայքարի համար Շրջանի վարչությունների, քաղաքների, բնակիչների և այլոց համար:

Գյուղատնտեսական Գծով Հանձնակատարին Առընթեր Տարածաշրջանային գրասենյակները

Antelope Valley.....(661) 974-8801
335 E. Ave. K-10, Lancaster 93535
Լոս Անջելես (միայն Նախապես ժամադրությունով).....(562) 622-0426
1320 E. Olympic Blvd., # 216, Los Angeles 90021
Sylmar (միայն Նախապես ժամադրությունով).....(818) 833-6647
14445 Olive View Dr., Sylmar 91342
South County.....(562) 622-0402
11012 Garfield Ave., South Gate 90280

Մոլախոտերի Վտանգների և Վնասատուների Համակարգված Վերահսկում (Weed Hazard & Integrated Pest Management)

12300 Lower Azusa Rd., Arcadia 91006-5872..... (626) 575-5462
Մոլախոտերի Քանակի Նվազեցում.....(626) 575-5484
Antelope Valley Տարածաշրջան.....(661) 974-8808, (661) 974-8803

Մոլախոտերի և բուսածածկ տարածքների մաքրում, կրծողների և ողնաշարավորների/այլ վնասատուների վերահսկում: Տրամադրում է խորհրդատվություն և աջակցություն բնակիչներին, որոնք բնակվում են վայրի բնության շրջակայքում և ունեն խնդիրներ և մտահոգություններ: Կարող է իրականացնել անմիջական հսկողություն որոշակի կրծողների, այլ կաթնասունների, թռչունների կամ ինվազիվ տարածվող մոլախոտերի նկատմամբ: Մշակում է վնասատուների դեմ պայքարի համակարգված ծրագրեր: Պաշտպանում է մարդկանց կյանքերն ու շինություններն անտառային հորդեհներից՝ մաքրելով ամայի տարածքների մոլախոտերը, բուսածածկ տարածքները և թափոնները Ոչ Ինքնավար համայնքներում և Շրջանի հետ պայմանագիր ունեցող քաղաքներում:

Վնասատուների Հայտնաբերում.....(626) 575-5472
Տեղադրում և վերահսկում է միջատների թակարդները՝ գյուղատնտեսական և բնապահպանական լուրջ վնասատուների հայտնաբերման համար, ինչպիսիք են, օրինակ, միջերկրածովյան պտղաճանճը և ճապոնական բզեզը:

Վնասատուների Վերացում և Արտադրության Որակի Պահպանում.....(562) 622-0426
Ստուգում է բույսերի ընդունումն այլ երկրներից՝ ապահովելու համար բույսերի գերեզ լինելն այնպիսի վնասակար վնասատուներից, որոնք չեն հանդիպում Կալիֆոռնիայում: Ստուգում

և գրանցում է հավաստագրված ֆերմերների շուկաները և հավաստագրված արտադրողներին՝ հավաստիանալու, որ վաճառվող ապրանքները ֆերմերների արտադրությունն են: Ստուգում է մրգերի, բանջարեղենի և հավիլիների որակը մեծածախ շուկաներում և պահեստներում՝ հավաստիանալու, որ որակը համապատասխանում է նահանգի օրենքներով սահմանված չափանիշներին:

Թունաքիմիկատների Մշակման Կանոնակարգ.....(626) 575-5466
Կարգավորում է թունաքիմիկատների օգտագործումը և պահպանումը, ուսումնասիրում է թունաքիմիկատների հետ կապված հիվանդությունները, վնասների մասին բողոքները և աշխատողների կողմից անվտանգության հետ կապված խախտումները: Տրամադրում է տեղեկություններ «աֆրիկանացված» մեղվատու մեղուների (Africanized Honey Bees) և ներմուծված կարմիր կրակե մրջյունների (Red Imported Fire Ants) մասին:

Մեղվապահության Մասին Տեղեկություններ / Մեղվապահներ.....(626) 350-1929
Տեղեկություններ գյուղատնտեսական հավաստագրման կարգի մասին, վնասատուներին վերահսկողներ, այգիները պահպանողներ, վնասատուներին սպանող նյութերի մասնավոր կիրառողներ, վնասատուների դեմ պայքարի խորհրդատուներ և վնասատուների դեմ պայքարող օդանավորողներ, տեղեկություններ կառուցվածքային հավաստագրման կարգի մասին և կառուցվածքային ծանուցումներ ֆուլիգացիայի իրականացման մոնիթորինգի մասին:

Տեղեկություններ «աֆրիկանացված» մեղվատու մեղուների մասին / Մեղուներ, հմբավորումներ.....(800) BEE-WARY
Մեղվապահները պետք է ամեն տարի ներկայանան Գյուղատնտեսական Գծով Հանձնակատարի/Քաշերի և Չափերի Վարչություն՝ գրանցման համար:

Միջատների և Բույսերի Հիվանդությունների Հայտնաբերում (Insect & Plant Disease Identification)

Միջատաբանություն (Էնտոմոլոգիա)/Բույսերի Պաթոլոգիաների Լաբորատորիա, 11012 S. Garfield Ave., South Gate 90280

Միջատներ.....(562) 622-0431
Բույսեր.....(562) 622-0433

Հայտնաբերում է միջատներին և այլ անողնաշար կենդանիներին, հատկապես նրանց, որոնք վնասում են բերքը և դեկորատիվ բույսերը: Բույսերի պաթոլոգը հայտնաբերում է բույսերի բակտերիաները, սնկերը, վիրուսները, սննդակյուղերի պակասը և գնահատում է բույսերի քիմիական վնասները:

Քաշեր և Չափեր (Weights & Measures)

11012 Garfield Ave., South Gate 90280.....(562) 622-0402

Բողոքներ.....(562) 622-0400

Չափագիտության (Մետրոլոգիա) Լաբորատորիա.....(562) 622-0419

Բիզնեսների Կողմից Սկաներների Միջոցով Գների

Ճշգրտության Ստուգում.....(800) 665-2900

Իրականացնում է գների ստուգումներ մանրածախ բիզնեսներում՝ հաստատելու, որ նշված գները համապատասխանում են ցուցադրված կամ գովազդվող գներին: Բիզնեսներից պահանջում է դրամարկին կից տեղադրել ծանուցում՝ սպառողներին տեղեկացնելով, որ սպառողներն իրավունք ունեն օգտվելու գովազդվող կամ ցուցադրված ամենացածր գնից: Բիզնեսները կարող են էլ. նամակ ուղարկել wm@acwm.lacounty.gov հասցեին կամ զանգահարել (562) 622-0415 հեռախոսահամարով տեղեկությունների համար: Իրականացնում է մանրածախ բիզնեսների գրանցում, որոնք օգտագործում են գների որոման ավտոմատացված սկաներ համակարգեր: Կատարում է գրանցումներ և ստուգում է Շրջակա առևտրում օգտագործվող բոլոր կշեռքների և հաշվիչների ճշգրտությունը, ստուգում է մեծածախ և մանրածախ ապրանքների փաթեթավորումը՝ ճշգրիտ քանակի և մակնշման համար, քննում է նմանատիպ խնդիրների վերաբերյալ բողոքները: Հասանելի է զանգվածի և ծավալի հավաստագրման ծառայություն:

Փոխարինող Հանրային Պաշտպան (Alternate Public Defender)

210 W. Temple St., 18-709, Los Angeles 90012.....(213) 974-6626
Կայք՝ apd.lacounty.gov

Տրամադրում է իրավական ներկայացուցչություն անապահով պատահալու կողմերին/ ամբաստանյալներին, որոնց Հանրային Պաշտպանը չի կարող ներկայացնել շահերի բախման, Առաջին Անյալի Դատարանում (Superior Court) դատական գործընթացների և վերադաս առյալներն դիմելու անկարողության պատճառով:

Կենդանիների հսամք և Վերահսկողություն (Animal Care & Control)

Գլխամասային Գրասենյակ՝ 5898 Cherry Ave., Long Beach 90805
(562) 728-4882, (800) 253-3555
Կայք՝ animalcare.lacounty.gov

Կամավոր Ծառայություններ.....(562) 256-1367
Կենդանիներ Պահելու Արտոնագրման մասին Տեղեկություններ.....(562) 345-0400
Կենդանիների հսամքի և Վերահսկողության Վարչության (DACC) Բժշկական
Աջակցության Թեժ Գիծ.....(562) 519-0339

Կենդանիների հսամքի և Վերահսկման Վարչությունում (DACC) գործում են կենդանիների հսամքի յոթ կենտրոններ (ACC), որոնք տեղակայված են Agoura Hills, Baldwin Park, Carson/Gardena, Castaic, Downey, Lancaster և Palmdale քաղաքներում: Այս ACC-ները ապահովում են անվտանգ, մարդասիրական հսամք այն կենդանիների համար, որոնք կորել են կամ այլևս պետք չեն իրենց տերերին: ACC-ի անձնակազմը և կամավորները անդադար աշխատում են կորած ընտանի կենդանիներին իրենց տերերի հետ վերամիավորելու կամ անօթևան կենդանիների համար տեր գտնելու համար: Animal Care-ն ունի նաև մի շարք ծրագրեր և համագործակցում է մի շարք ծրագրերի հետ՝ օգնելու Շրջանի կենդանիների տերերին: Վարչությունում աշխատում են կենդանիների վերահսկողության ոլորտի երգվալ անձիկք (sworn officers), որոնք հանդես են գալիս որպես համայնքի հասարակական անվտանգության և կենդանիների անվտանգության ծրագրի հիմնական բաղադրիչ: Կենդանիների վերահսկողություն իրականացնող մեր աշխատակիցները հետևում են կենդանիների մասին նահանգային և տեղական օրենքների պահպանմանը և արձագանքում են ծառայությունների տրամադրման դիմումներին շաբաթը յոթ օր, օրը 24 ժամ: Այս անձիկք պաշտպանում են համայնքները վտանգավոր կենդանիներից, փրկում են հիվանդ, վնասվածքներ ունեցող կամ կորած կենդանիներին, քննում են կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքի, բռնության, աստեման և կենդանիների անօրինական կոիվների կազմակերպման դեպքերը, կիրառում են կենդանիների մասին տեղական և նահանգային կանոնադրությունները և աջակցում են տեղական իրավապահ մարմիններին: DACC-ը նաև համագործակցում է Լոս Անջելեսի Շրջանի առաջին արձագանքողների հետ՝ օգնելու բնակիչներին և նրանց ընտանի կենդանիներին, փրկում է կենդանիներին անտառային հրդեհներից, ջրհեղեղներից, երկրաշարժերից և տեխնածին աղետներից:

Կորած և գտնված: Այն բնակիչները, ովքեր կորցրել են իրենց ընտանի կենդանուն, կարող են այցելել կենդանիների հսամքի յոթ կենտրոններ՝ կենդանիներին գտնելու և վերադարձնելու համար: Բնակիչները պետք է նաև հետևեն animalcare.lacounty.gov կայքի տեղեկություններին, քանի որ նկարները վերբեռնվում են իրական ժամանակում:

Որդեգրում: Կենդանիների հսամքի և Վերահսկողության Վարչությունում գործում են յոթ հսամքի կենտրոններ, որտեղ համայնքի անդամները կարող են գտնել ընտանի կենդանի որդեգրման համար: (Այցելեք մեր կայք՝ animalcare.lacounty.gov ինքնուրույն ամրագրելու որդեգրման հարցերով Ձեր տեսակցությունը մեր նշանակած ժամերին առցանց՝ animalcare.lacounty.gov: Որդեգրման համար անձամբ մոտենալ-գրանցվելու ծառայությունը հասանելի է կիրակիից շաբաթ՝ կեսօրվա 2-ից երեկոյան 5-ը, բացառությամբ չորեքշաբթի օրերի՝ կեսօր. 2-ից երեկոյան 7-ը):

Կատաղության Դեմ Պատվաստում: Կատաղության դեմ պատվաստումն իրականացվում է կենդանիների խնամքի կենտրոններում և կենտրոններից դուրս: Կապ հաստատեք կենդանիների խնամքի Ձեր տեղական կենտրոնի հետ՝ կատաղության դեմ պատվաստումների կատարման ամսաթվերը, ժամերը և տեղանքը ճշտելու համար: (Այցելեք մեր կայք՝ տեղում կատարվող պատվաստումների և Vet@ThePark Wellness կլինիկաների համար հասանելի ժամադրությունների համար:)
Միկրոչիպավորում (Microchip): Միկրոչիպավորումն անցկացվում է կենդանիների խնամքի կենտրոններում և կենտրոններից դուրս: Կապ հաստատեք կենդանիների խնամքի Ձեր տեղական կենտրոնի հետ՝ միկրոչիպավորման ամսաթվերը, ժամերը և տեղանքը ճշտելու համար:

Ստերիլիզացում և Կաստրացիա: Կապ հաստատեք մեր Spay & Neuter Վաուչերային Ծրագրի հետ՝ (562) 345-0321 համարով կամ այցելելով SpayNeuterProgram@animalcare.lacounty.gov՝ պարզելու համար՝ արդյոք Դուք իրավասու եք օգտվել ստերիլիզացման/կաստրացիայի վաուչերից կամ հնարավոր ցածր գնով ստերիլիզացման /կաստրացիայի հնարավորությունից Ձեր տարածաշրջանում:

Good Neighbor Cat Ծրագիր: ստերիլիզացման/կաստրացիայի ծառայություններ համայնքում ազատ անտուն, անտեր կատուների բարեկեցության համար:
Կապ հաստատեք (562) 345-0321 հեռախոսահամարով կամ ուղարկեք էլ. նամակ SpayNeuterProgram@animalcare.lacounty.gov հասցեին:

Կենդանիների Սննդի Պահեստ: Կենդանիների սննդօգնության համար դիմեք ստորև նշված՝ կենդանիների խնամքի Ձեր տեղական կենտրոն կամ զանգահարեք (562) 519-0339: Ծառայությունը տրամադրվում է՝ ելնելով դրամաշնորհով ֆինանսավորվող մթերքի առկայությունից:

Բուժօգնության Գիծ: Օգնության գիծը տրամադրում է խորհրդատվություն և ռեսուրսներ ընտանի կենդանիների տերերի համար, հատկապես նրանց, որոնք կանգնած են իրենց կենդանիներին հանձնելու վտանգի առջև կամ կարիք ունեն ոչ շտապ բուժօգնության և/կամ խնամատար աջակցության: Տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել (562) 519-0339 հեռախոսահամարով կամ ուղարկել էլ. նամակ Access2Care@animalcare.lacounty.gov հասցեին:

Շներ և Կատուներ Պահելու Արտոնագրեր: Շուն կամ կատու պահելու արտոնագիր ստանալու համար Դուք պետք է ներկայացնեք կատաղության դեմ պատվաստման վկայական, ինչպես նաև միկրոչիպավորման մասին տեղեկություն և Կենդանիների խնամքի և հսկողության համար ստերիլիզացման/կաստրացիայի պահանջներին համապատասխանության ապացույց:

Կենդանիների խնամքի Կենտրոններ

Տերերը կարող են հետ պահանջել իրենցից վերցված կենդանիներին և կարող են որդեգրել լքված կենդանիներին Շրջանի կենդանիների խնամքի ցանկացած կենտրոնից: Ծառայության համար դիմեք կենդանիների խնամքի մուտակա կենտրոն:

Agoura, 29525 Agoura Rd., Agoura 91301.....	(818) 991-0071
Baldwin Park, 4275 N. Elton St., Baldwin Park 91706.....	(626) 962-3577
Carson, 216 W. Victoria St., Gardena 90248.....	(310) 523-9566
Castaic, 31044 N. Charlie Canyon Rd., Castaic 91384.....	(661) 257-3191
Downey, 11258 S. Garfield Ave., Downey 90242.....	(562) 940-6898
Lancaster, 5210 W. Ave. I, Lancaster 93536.....	(661) 940-4191
Palmdale, 38550 Sierra Hwy., Palmdale 93550.....	(661) 575-2888

Արվեստ և Մշակույթ (Arts and Culture)

1055 Wilshire Blvd., Ste. 800, Los Angeles 90017.....(213) 202-5858

Կայք՝ lacityarts.org

Լոս Անջելեսի Շրջանի Արվեստի և Մշակույթի Վարչության (Արվեստ և Մշակույթ) առաքելությունը Լոս Անջելեսի Շրջանում արվեստի, մշակույթի և ստեղծարար մտքի զարգացումն է: Արվեստի և մշակույթի Վարչությունն այս առաքելությունն իրականացնում է ոչ առևտրային կազմակերպություններին դրամաշնորհների և տեխնիկական աջակցության տրամադրման, արվեստագետներին, կրթական ոլորտի աշխատողներին և արվեստի ոլորտի ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցներին մասնագիտական զարգացման հնարավորությունների տրամադրման, արվեստի նոր գործերի պատվերների իրականացման և Շրջանի բաղաբացիական արվեստի հավաքածուի ղեկավարման, Շրջանի մակարդակով արվեստի ասպարեզում կրթական նախաձեռնությունների աշխատանքների իրականացման, հավասարության հիմքով ուսումնասիրությունների և գնահատումների, ստեղծարար տնտեսության ոլորտում կարիերայի ուղիների, և Շրջանի վարչությունների և գործակալությունների հետ խաչաձև ստեղծագործական ռազմավարությունների միջոցով, որոնք վերաբերվում են բաղաբացիական խնդիրներին: Այս բոլոր աշխատանքներն իրականացվում են Շրջանի մշակութային հավասարության և ներառականության նախաձեռնության շրջանակում՝ երկարաժամկետ հանձնառությամբ արվեստի ասպարեզում հավասարության և հասանելիության խթանման համար:

Arts Ed Collective: Arts Ed Collective-ը տարածաշրջանային նախաձեռնություն է, որի առաքելությունն է արվեստը յուրաքանչյուր երեխայի աճի և զարգացման հիմնական մասը դարձնել: 2002 թվականին հիմնադրված այս նախաձեռնությունը ներկայումս ներառում է 74 դպրոցական շրջաններ, 5 չարտերային դպրոցների ցանցեր, Շրջանի 13 տարբեր գործակալություններ և համայնքային հարյուրավոր կազմակերպություններ, ինչպես նաև արվեստագետ-ուսուցիչների, ուսուցիչների, բարերարների և իրավապաշտպանների: Արվեստի ուսուցումը ընդլայնող ծրագրերի և գործունեության միջոցով գործընկերության և համագործակցության ամրապնդմամբ և արվեստի ուսուցման կարևորության մասին հանրության իրազեկման բարձրացմամբ՝ Arts Ed Collective-ը միավորում է ջանքերը Շրջանի ամբողջ տարածքում, որպեսզի հասնի համատեղ նպատակին և բոլոր երիտասարդները ներգրավված լինեն արվեստում ամբողջ տարվա ընթացքում, բանի որ արվեստը կարևոր է մարդկային աճի և զարգացման համար: Արվեստի ուսուցումը նաև ուղղված է համակարգերի բարեփոխման ջանքերին, որոնք ընդգծում են երիտասարդների դրական զարգացման համար համակարգված մոտեցում: Նպատակն արվեստի ներգրավումն է ինստիտուցիոնալ տարբեր համակարգերում արդարադատության համակարգից տուժած կամ վտանգի տակ գտնվող Շրջանի երիտասարդների (և ընտանիքների) բուժման խթանման, անձնական աճի և ընդհանուր բարեկեցության համար:

Արվեստի Աշխատափորձի Ծրագիր (AIP): 2000 թվականին հիմնադրված AIP-ն ապահովում է աշակերտների համար Նշանակալի փորձ արվեստի ոլորտում գործող ոչ առևտրային կազմակերպություններում փաժամանակ օգնելով կազմակերպություններին մեծացնելու արվեստի ոլորտի ապագա առաջնորդների: Որպես երկրում վճարովի աշխատափորձի ամենամեծ ծրագիր, որն ունի համայնքային բուլեջների/համալսարանների ուսանողներին ընդգրկելու պարտավորություն, AIP-ը հնարավորություն է ընձեռում այն ուսանողներին, որոնք այլապես չէին կարող ունենալ ուղի դեպի արվեստ և կարիերա ստեղծելու հնարավորությունն ստեղծարար տնտեսության ոլորտում:

Քաղաքացիական Արվեստ: Ապահովում է բարձրորակ քաղաքացիական տարածքների զարգացումը՝ ներգրավելով արվեստագետներին նախագծման և ձևավորման նախնական փուլերում, խրախուսում և նորարարական մոտեցումները քաղաքացիական արվեստում և ապահովում է հասանելիություն բարձրակարգ արվեստին Լոս Անջելեսի

Շրջանի բնակիչների համար: Դեկավարում է Շրջանի քաղաքացիական արվեստի հավաքածուն, որը բաղկացած է Շրջանի սեփականության ներքո գտնվող պատմական և ժամանակակից քաղաքացիական արվեստի գործերից:

Միջոցառումային Համագործակցություն: Արվեստի և Մշակույթի Վարչությունը համագործակցում է Շրջանի մյուս վարչությունների, գործակալությունների և մասնավոր ընկերությունների հետ՝ քաղաքացիական մարտահրավերների համար ստեղծարար լուծումներ մշակելու և մշակույթին հասանելիությունը բարձրացնելու համար: Օրինակ՝ The Creative Strategist-Artist in Residence (Creative Strategist) ծրագրի շրջանակում արվեստագետները, արվեստի ասպարեզում ղեկավարները կամ ստեղծագործական ոլորտի մյուս աշխատողներն ընդգրկվում են Շրջանի վարչություններում՝ աշխատելու անձնակազմի, նախագծի գործընկերների և համայնքի շահագրգիռ կողմերի հետ՝ մշակելու ստեղծագործական մոտեցում և լուծելու սոցիալապես բարդ մարտահրավերները:

Դրամաշնորհներ և Մասնագիտական Զարգացում: Տրամադրում է ֆինանսական աջակցություն կազմակերպություններին՝ Կազմակերպչական Դրամաշնորհային Ծրագրի և Արվեստի Համայնքային Ազդեցության Դրամաշնորհի միջոցով՝ ապահովելով մշակութային ծառայությունների և հնարավորությունների հասանելիությունը բոլոր տարիքի բնակիչների համար: Դրամաշնորհառուները կարող են նաև օգտվել կազմակերպության կարիքներին առնչվող տեխնիկական աջակցության և կառավարման զարգացման ծրագրերից:

Հետազոտություններ և Փնահատում: Այս բաժինը օգնում է ապահովել, որ Արվեստի և Մշակույթ Վարչության ծրագրերը հիմնված լինեն փաստերի և ապացույցների վրա և կառուցված լինեն ապագայի հուսադրող փորձի վրա: Այս բաժինը տեղեկություններ է տրամադրում Արվեստի Էկոլոգիայի (Arts ecology) ասպեկտների մասին, ներառյալ արվեստի ոչ առևտրային կազմակերպություններում աշխատավարձերը և առավելությունները, արվեստի ուսուցման և ստեղծարար աշխատանքի միջև կապը, մշակութային հավասարությունը և ներգրավումը, ինչպես նաև Լոս Անջելեսի Շրջանի երիտասարդների համար ստեղծարար մասնագիտական ուղու ռեսուրսները:

Հարկային Փնահատող (Assessor)

Փնահատող Ջեֆրի Պրանգ (Jeffrey Prang)

500 W. Temple St., Rm. 225, Los Angeles 90012.....(213) 974-3211, (888) 807-2111

Կայք՝ <https://assessor.lacounty.gov/>

Փնահատողը հաստատում է հարկման ենթակա բոլոր անշարժ և բիզնես-ձեռնարկատիրական գույքերը, սահմանում է այդ գույքերի արժեքները՝ համաձայն Նահանգային օրենքի, և ազատում է հարկային պարտավորությունից՝ հարկման ոչ ենթակա գույքի հիմքով (exclusion), ինչպես նաև նվազեցնում է հարկային պարտավորության չափը (exemption):

Ամեն տարի կազմվում է Փնահատման Ցուցակ, որտեղ նշվում են Շրջանում գտնվող գույքերի արժեքները, ինչպես նաև տարեցտարի կատարվող փոփոխությունները: Այս աշխատանքը կազմում է մեր գույքահարկի համակարգի հիմքը, որն աջակցում է տեղական հանրային ծառայություններին: Լրացուցիչ տեղեկությունները հասանելի են Փնահատողի Հանրային Ծառայությունների վաճառատեղաններում, որոնք գտնվում են Վարչական Կենտրոնում (1-ին հարկի Նախասրահ կամ 225-րդ սենյակ), տարածաշրջանային գրասենյակներում, առցանց՝ <https://assessor.lacounty.gov/> կայքում և Կոնտակտային Ձևի միջոցով՝ <http://www.assessor.lacounty.gov/contact>, որը Փնահատողի Գրասենյակի հետ կապ հաստատելու ամենահարմար տարբերակն է:

Շրջանը և Տարածաշրջանային Գրասենյակները՝

Արևելյան Շրջան.....(626) 258-6001

Տարածաշրջաններ՝ 4, 5, 6, 11, 27, Տարածք 4՝ 1190 Durfee Ave., South El Monte 91733

Հյուսիսային Շրջան.....(818) 833-6000

Տարածաշրջաններ՝ B1, 2, 3, 24, Տարածք 1՝ 13800 Balboa Blvd., Sylmar 91342

Հարավային Շրջան.....(562) 256-1701

Տարածաշրջաններ՝ 10, 12, 14, 26, Տարածք 3՝ 1401 E. Willow St., Signal Hill 90755

Արևմտյան Շրջան.....(310) 665-5300

Տարածաշրջաններ՝ 7, 9, 25, Տարածք 2՝ ժամանակավորապես տեղափոխվել է *Kenneth Hahn-ի Վարչական Կենտրոն*

Lancaster Տարածաշրջան.....(661) 940-6700

Տարածաշրջաններ՝ A1, 251 E. Ave. K-6, Lancaster 93535

Van Nuys-ի Փոքր Գրասենյակ.....(818) 901-3455

14340 Sylvan St., Van Nuys 91411

Հարկային Արտոնությունների Վերաբերյալ Խորհուրդներ և Տեղեկություններ

Կան տարբեր հարկային արտոնություններ՝ հարկերից ազատում, նվազեցումներ և այլ մեխանիզմներ, որոնք հասանելի են գույքի սեփականատերերի համար՝ տարեկան գույքահարկից խնայողություններ անելու համար: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք <https://assessor.lacounty.gov/> կամ նշանակեք առցանց կամ անձնական հանդիպում այցելելով assessor.lacounty.gov/appointment կայք:

Սուդիտոր-Հսկիչ (Auditor-Controller)

500 W. Temple St., Rm. 525, Los Angeles 90012.....(213) 974-8301

Կայքը՝ auditor.lacounty.gov

Իրականացնում է ֆինանսական ղեկավարում և փորձագիտական խորհրդատվություն հարկաբյուջետային հարցերի լայն շրջանակի վերաբերյալ, պաշտպանում է ֆինանսական ամբողջականությունը և հաշվետվողականությունը շրջանի բոլոր բիզնեսների գործունեության մեջ: Հրապարակում է ֆինանսական ծրագրերը (քաղաքականություն), ընթացակարգերը և ներքին հսկողության ուղեցույցները Շրջանի վարչությունների ֆինանսական գործառնությունների համար, իրականացնում է հաշվապահական հսկողություն շրջանի բոլոր ֆինանսական գործարքների նկատմամբ և հանդիսանում է համատեղ գործընկերությունների և շահույթ չհետապնդող կորպորացիաների հսկիչ: Հանդես է գալիս որպես վճարում իրականացնող գործակալ (paymaster)՝ տրամադրելով վճարումների արտոնագրեր վաճառողներին, աշխատակիցներին, երեխաների ալիմենտային վճարումների, Շրջանի դեմ կայացված վճիռների և փոխհատուցումների, ինչպես նաև այլ պահանջների համար: Իրականացնում է վարչությունների, ղեկավար մարմինների աուդիտային ստուգումները, ինչպես նաև վարչություններում խարոյակությունների և ոչ պատշաճ վարքագծի դրսևորումների քրեական և վարչական քննություն:

Կատարում է գույքահարկի շրջանակում պարտադիր գործառնություններ, ներառյալ գույքահարկի ցուցակների ընդլայնում, համայնքների վերակառուցման գործակալություններին հատկացված միջոցների հաշվառում և հավաքագրված գույքահարկերի բաշխում: Պատասխանատու է բարեկեցությանն ուղղված բոլոր վճարումների կատարման, ներառյալ հարակից բանկային ծառայությունների մատուցման համար:

Խմբային Տներում Ապրող Երեխաների Իրավունքների Պաշտպան

(Օմբուդսմեն).....(888) 445-1234

350 S. Figueroa St., 8th Floor, Los Angeles 90071

Էլ.հասցե՝ afriend@auditor.lacounty.gov

Ծառայում է որպես Երեխաների և Ընտանեկան Ծառայությունների Վարչության անկախ

իրավապաշտպան և խմբային տներում գտնվող երեխաների խնդիրները լուծող անձ:
Երեխաներին խորախուսվում է զանգահարել կամ էլեկտրոնային նամակ ուղարկել
օմբուդսմենին, որը կուսումնասիրի խնդիրները և կաջակցի խնդիրների լուծման հարցում:

Չկանխկացված Անդորրագրեր.....(213) 974-7452
Կայք՝ unclaimedchecks.lacounty.gov

Նախատեսված է հասանելի անդորրագրերի որոնման և այդ անդորրագրերը
(իրավաբանական անվանումը՝ Շրջանի «երաշխագրեր») ստանալու դիմում ներկայացնելու
համար, որոնք թողարկվել և փոստային առաքմամբ ուղարկվել են Շրջանի կողմից, սակայն
չեն կանխկացվել ստացողի կողմից: Այդ անդորրագրերը ներառում են դեռևս
չկանխկացված անդորրագրերը: Դրանք ներառում են նաև այն անդորրագրերը, որոնք
կարող են խարդախությամբ կանխկացված լինել ստացողից բացի այլ անձի կողմից:

Հատուկ Հարկատեսակներ (Direct Assessments).....(213) 974-8368

Հատուկ հարկատեսակը ոչ գույքի արժեքի հիման վրա գանձվող հարկատեսակն է, որը
գանձվում է տարբեր ծառայություններ մատուցող մեկ հողամասից (parcel), ինչպիսիք են
ծառայությունների մատուցման տարեկան վճարները, տարածաբաշխային բարելավման
ուղղված վճարները, հատուկ հարկերը և այլ վճարները: Հատուկ հարկատեսակները
սովորաբար գանձվում են հարկային իրավասություն ունեցող շրջանային մարմինների
կողմից: Բազմաթիվ հատուկ հարկատեսակներ առավելություններ են տրամադրում
անմիջական հողամասի համար, ինչպես օրինակ՝ աղբահանությունը, կոյուղագծերի
սպասարկումը, լուսավորության ապահովումը և կանաչապատման պահպանումը և
մոծակների նվազեցումը: Յուրաքանչյուր հատուկ հարկատեսակի հեռախոսահամարը
Նշված է Գույքահարկի Օրինագծում և կարելի է ձեռք բերել <http://auditor.lacounty.gov/direct-assessments/> կայքից:

Տեղական Փոքր Բիզնեսների Վճարումների Կապակցված Անձ.....(213) 974-8428

Հանդիսանում է կոնտակտային անձ հավաստագրված տեղական փոքր բիզնեսների համար
(LSBE), որոնք մասնակցում են Ժամանակին Վճարումների Ծրագրին (Prompt Payment
Program)՝ վճարումների ուշացումներից խուսափելու կամ այլ խնդիրներ լուծելու համար:
Համակարգում է տեղական փոքր բիզնեսների և Շրջանի համապատասխան
վարչություն(ներ)ի միջև գործողությունները և/կամ լուծումները:

Հաղորդում Խարդախությունների մասին.....(800) 544-6861

Ձանգահարեք այս թեժ գծի հեռախոսահամարով, որպեսզի հաղորդեք Լոս Անջելեսի
Շրջանի ղեկավարների, աշխատակիցների, պայմանագրային աշխատողների
(կապալառու) կամ վաճառողների կողմից իրականացված խարդախությունների, Շրջանի
ռեսուրսների վատնումների կամ յուրացումների մասին: Աշխատողների Փոխհատուցման
ուղորդում ենթադրյալ խարդախությունների և չարաշահումների վերաբերյալ
մեղադրանքները ենթակա են գնահատման և քննման:

Լողափեր և Նավահանգիստներ (Beaches & Harbors)

13837 Fiji Way, Marina del Rey 90292.....(424) 526-7777
Կայք՝ beaches.lacounty.gov

Հիմնականում պատասխանատու է Մարինա Դել Ռեյի (Marina del Rey) և ավելի քան 24 մղոն
չնդգորված լողափերի համար, որոնք ձգվում են Մալիբուի Նիկոլասի Կիրճից (Nicholas
Canyon) մինչև Սան Պեդրոյի Ռոյալ Պալմս (San Pedro's Royal Palms): Դեկավարում է Մարինա
դել Ռեյի հողատարածքների վարձակալությունը և վերակառուցման աշխատանքները,
վերահսկում է պահպանում և Մարինա Դել Ռեյի հանրային նավարկության օբյեկտները և
այգիները, ինչպես նաև անցկացնում է Small Craft Harbor Հանձնաժողովի Նիստերը
(ամսական)՝ ուղղված նավահանգստի խնդիրներին, Նախագծման Վերահսկման Խորհրդի
(Design Control Board) Նիստերը (ամսական)՝ ուղղված վերակառուցման ծրագրերի և
Նախագծերի վերանայմանը, և Լողափի Հանձնաժողովի (Beach Commission) Նիստերը
(եռամսյակային)՝ ուղղված Շրջանի լողափին առնչվող հարցերին և ծրագրերին:

Տրամադրում է անվճար համայնքային ծրագրեր Dockweiler Երիտասարդական Կենտրոնում, որը գտնվում է Մարինա Դել Ռեյի Playa del Rey և Burton Chace Այգում, Ներառյալ մրցանակակիր ամառային համերգների կազմակերպում, հրավառությունները հուլիսի 4-ին և Ամանորի գիշերը, Երիտասարդական ծովագնացության ծրագրերը և Ժամանցային այլ միջոցառումներ:

Ինսանում և ախտահանում է Ծրջանի կողմից ղեկավարվող լողափերը և շահագործում և/կամ պահպանում է ափամերձ հաստատությունները և հարմարությունները, ինչպիսիք են Dockweiler Recreational Vehicle Park-ը, County Beach և Marina ավտոկայանատեղիները, զուգարանները, Նավերի կառանատեղիները և վոլեյբոլի խաղադաշտերը: Պահպանում է Փրկարար աշտարակները՝ օվկիանոսի անվտանգությանն աջակցելու համար: Համակարգում է հանգստի ծրագրերը, ինչպիսիք են WATER Երիտասարդական Ծրագրի առագաստանավային ճամբարները և Օվկիանոսի Անվտանգության Օրը (Ocean Safety Day), տալիս է Ծրջանի լողափերում և Մարինա Դել Ռեյում հարսանիքների, երեկոյների, սպորտի և մրցաշարերի, ինչպես նաև հանգստի ճամբարների կազմակերպման թույլտվություններ և առաջարկում է անվճար համայնքային ծրագրեր, ինչպես նաև հանրային օգտագործման Նպատակով վարձակալման հնարավորություն Dockweiler Երիտասարդական Կենտրոնում և Burton Chace Այգում:

Օգտակար Հեռախոսահամարներ
Վարչության Այցելուների Ընդունման Կետ և Marina del Rey-ի Այցելուների
Տեղեկատվական Կենտրոն

4701 Admiralty Way, Marina Del Rey 90292.....	(424) 526-7900
Ժամերը՝ Երկ-Կիր, շաբաթը 7 օր, առ. 8-ից երեկոյան 5-ը	
Տարեցների Ավտոկայանման Անցագիր (Senior Parking Pass).....	(424) 526-7900
Նախագծման Վերահսկման Խորհուրդ / Պլանավորում (Design Control Board/Planning).....	
.....	(424) 526-7746
Dockweiler Երիտասարդական Կենտրոն.....	(310) 726-4128
Burton Chace Այգի	(424) 526-7910
Նավերի Կայանատեղի (Boat House).....	(424) 526-7912
Փրկարարներ.(Lifeguards).....	(310) 577-5700
Ավտոկայանատեղիների Գրասենյակ.(Parking Office).....	(310) 821-1081
RV Կայանման Ամրագրումներ(RV Park Reservations).....	(310) 322-4951 կամ (800) 950-7275
W.A.T.E.R. Երիտասարդական Ծրագիր	
(Sailing Camp & Ocean Safety Day).....	(424) 526-7889
Նավահանգստի Պարեկային Ծառայություն	
(VHF Channel 16 Նավերի համար.....	(310) 482-6000

Վնասված կամ Լողափում Լքված Կենդանիներ

- Սան Պեդրո Խաղաղօվկիանոսյան Ժայռաշարի միջով
(Սան Պեդրո՝ Խաղաղօվկիանոսյան Պալիստեյի միջով) - (800) 39-WHALE
- Մայիբու - (310) 458-9453

Մուտքի Թույլտվությունների /Արտոնագրումների Իրավունք.....(424) 526-7726

Պահանջվում է կարգավորող մարմնի մյուս թույլտվությունների և հաստատումների հետ միաժամանակ, երբ շինարարությունը, շինարարության որևէ փուլում իրականացվող աշխատանքները, վերանորոգման կամ տեղադրման գործողությունները պահանջում են մուտք լողափերի և նավահանգիստների սեփականության տարածք կամ այդպիսի տարածքի օգտագործում, որը գտնվում է Մարինա Դել Ռեյի տարածքում և պատկանում, վերահսկվում կամ կառավարվում է Լոս Անջելեսի Ծրջանի կողմից:

Marina del Rey Զբոսաշրջության Խորհուրդ.....(310) 306-9900

Կայք՝ visitmdr.com/

Marina Նավերի Պահպանման Վայրի Վարձույթ.....(424) 526-7890

- Anchorage 47: 17-85 ոտնաչափ մոտորանավակների և առագաստանավերի՝ ջրում առանձին կառանատեղիով (slip) պահպանման համար:
- Ցամաքային Պահպանման Դարակներ: Փայտե և փչովի մակույկների, կայանների, թիավարման փայտերի և թիավարման տախտակների համար:
- Կայմի Դիրքով Ցամաքային Պահպանում (Mast-up): 15 - 31 ոտնաչափ երկարությամբ առագաստանավերի համար:
- Parcel 77 Ցամաքային Պահպանում: 15-50 ոտնաչափ երկարությամբ մոտորանավակների համար:
- Հեծանիվների Պահպանման Կողպվող Պահարաններ:

Լողափերից Օգտվելու Թույլտվություններ և Նավահանգիստներից Օգտվելու Արտոնագրեր.....(424) 526-7880
4601 Lincoln Blvd., Marina del Rey 90292

Լողափերից օգտվելու թույլտվությունները և Նավահանգիստներից օգտվելու արտոնագրերը պահանջվում են Լոս Անջելեսի Շրջանի լողափերում կամ Մարինա դել Ռեյում հետևյալի համար՝ (1) ցանկացած առևտրային օգտագործման և (2) 50-ից ավելի անձանցով կազմակերպված ցանկացած հավաքի համար, կամ (3) ցանկացած օգտագործման համար, որը ներառում է վարձու ծառայություններ (անկախ խմբի չափից): Գործողությունների կամ միջոցառումների տեսակները կարող են ներառել ճամբարներ, դպրոցական էքսկուրսիաներ, լողափերի մաքրում, հարսանիքներ, երեկոյաններ, հուշ-երեկոյանների կազմակերպում կամ սպորտային միջոցառումներ: Ծանոթացե՛ք ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ (PERMITS) բաժնի տեղեկություններին <http://beaches.lacounty.gov/> կայքում:

Վերահսկիչների Խորհուրդ (Board of Supervisors)

Կայքը՝ bos.lacounty.gov.....(213) 974-1411

Հանդես է գալիս որպես Լոս Անջելեսի Շրջանի ղեկավար մարմին: Որպես այդպիսին՝ ունի Շրջանի կառավարման գործադիր և օրենսդիր մարմնի լիազորություններ, ընդունում է որոշումներ, սահմանում է աշխատավարձեր և հատուկ կանոնակարգեր Շրջանի վարչությունների և հատուկ տարածաշրջանների համար: Խորհրդի հինգ անդամներն ընտրվում են իրենց Շրջանի ընտրողների կողմից չորս տարի ժամկետով:

Խորհրդի հերթական նիստերը տեղի են ունենում ամիսը երկու անգամ՝ երեքշաբթի օրերին, առավոտյան 9:30-ին Խորհրդի նիստերի դահլիճում (381B Kenneth Hahn Վարչական Կենտրոն, 500 W. Temple St., Լոս Անջելես): Խորհրդի յուրաքանչյուր հերթական նիստ, որը տեղի է ունենում յուրաքանչյուր ամսվա չորրորդ երեքշաբթի օրը, հիմնականում պետք է ուղղված լինի օրենքով նախատեսված պարտադիր հանրային լսմանը՝ գոտիավորման հարցերի, վճարների բարձրացման, հատուկ տարածաշրջանային գործընթացների, գույքերի հետ կապված գործարքների և այլնի վերաբերյալ:

Երկուշաբթի օրվա արձակուրդին հաջորդող երեքշաբթի օրը, նիստերը սովորաբար սկսվում է կեսօր. ժամը 1-ին:

Վերահսկիչների Խորհրդի Գործադիր Գրասենյակ (Executive Office of the Board of Supervisors)

Kenneth Hahn Վարչական Կենտրոն

500 W. Temple St., 383, Los Angeles 90012

Կայք՝ bos.lacounty.gov/About-Us/Executive-Office-of-the-Board

Էլ. հասցե՝ executiveoffice@bos.lacounty.gov

Գործադիր Գրասենյակի խորհրդի Գործառնությունների բաժինը պատրաստում է խորհրդի օրակարգերը, հայտնում է խորհրդի կողմից ձեռնարկված գործողությունների մասին, պատրաստում է նիստերի արձանագրությունները, պահպանում է խորհրդի գրառումները և խորհրդին տրամադրում է վարչական աջակցություն և աջակցություն տեղեկատվական տեխնոլոգիաների հարցում: Վերահսկիչների խորհրդի օրակարգերը և խորհրդին ուղղված նամակները ընթացիկ շաբաթվա խորհրդի նիստի համար հասանելի են առցանց՝ սկսած ժողովին նախորդող յուրաքանչյուր հինգշաբթի առավոտից: Այս կայք մուտք գործող անձինք կարող են նաև բաժանորդագրվել՝ հայտարարության տեղադրման ժամանակ օրակարգի հղմամբ ծանուցում ստանալու համար: Նիստի ամփոփագիրը, որը սահմանում է խորհրդի կողմից ձեռնարկված վերջնական գործողությունները, հասանելի է նիստից հինգ աշխատանքային օր անց lacounty.gov/sop/ կայքում:

Այս կայք մուտք գործող անձինք կարող են նաև բաժանորդագրվել՝ նիստի ամփոփագրի տեղադրման ժամանակ, օրակարգի հղումով, էլ. հասցեին շաբաթական ծանուցում ստանալու համար: Խորհրդի նիստի արձանագրությունները հասանելի են մոտավորապես յուրաքանչյուր չորեքշաբթի երեկոյան խորհրդի նիստից հետո bos.lacounty.gov/Board-Meeting կայքում: Խորհրդի յուրաքանչյուր նիստ կարելի է դիտել ուղիղ հեռարձակմամբ հետևյալ հղումով՝ bos.lacounty.gov/Board-Meeting/Live-Broadcast:

Խորհրդի վերաբերյալ տեղեկություններ

Հետևեք խորհրդի Հանդիպման Ուղիղ Հեռարձակմամբ.....(877) 873-8017
 Անգլերենի համար հավաքեք 111111#, Իսպաներենի համար հավաքեք 222222#
 Գործողությունների Ծրագիր.....(213) 974-1442
 Կայքը՝ bos.lacounty.gov/Board-Meeting/Board-Agendas
 Հանդիպումների Արձանագրությունների կամ DVD տարբերակների համար/ խորհրդի
 Կանոնակարգը.....(213) 974-1424
 Կայքը՝ bos.lacounty.gov/Board-Meeting
 Նիստի Ամփոփում / Հրամանագրեր / Նահանգի Օրենսդրություն.....(213) 974-1444
 Կայքը՝ lacounty.gov/sop
 Կայքը՝ library.municode.com/ca/los_angeles_county

Լոբբիստների Գրանցում.....(213) 974-1093

Կայքը՝ [Lobbyist\(lacounty.gov\)](http://Lobbyist(lacounty.gov))

Լոբբիստների Հրամանագրի 2.160-րդ գլուխն ընդունվել է Լոս Անջելեսի Շրջանի Վերահսկիչների խորհրդի կողմից 1993թ. ապրիլին: Հրամանագրի համաձայն՝ այն անձինք, ովքեր ստանում են փոխհատուցում Շրջանի որևէ պաշտոնյայի հետ հանդիպումից՝ պաշտոնական գործողությունների վրա ազդելու նպատակով, պետք է գրանցվեն Գործադիր Տնօրենի մոտ: Հրամանագիրը նաև պահանջում է, որ գրանցվեն լոբբիստ գործատուները, ֆիզիկական անձինք և/կամ կազմակերպությունները, որոնք աշխատանքի են վերցնում Շրջանի լոբբիստներին: Լոբբիստների հրամանագրի կանոնների խախտումը կարող է հանգեցնել տուգանքների և այլ տույժերի:

Անձին Կամ Գույքին Պատճառված Վնասի Հատուցման

Պահանջ.....(213) 974-1440

Կայք՝ bos.lacounty.gov/claims-for-damages/

Արձանագրություններ..... (213) 974-1424

Կայք՝ bos.lacounty.gov/services/records-of-the-board

Իրավաբանական Փաստաթղթերի Մշակման Գործընթաց

Լոս Անջելեսի Շրջանի կամ Շրջանի Վարչության դեմ դատական ծանուցագրերը և բողոքները կարող են առաքվել և ընդունվել Նշանակված աշխատակցի կողմից հետևյալ հասցեով՝ 500 W. Temple փող, Սենյակ 383, Լոս Անջելես 90012:

Վերահսկիչների խորհրդի կողմից պահպանվող արձանագրությունները ենթակա են տրամադրման միան դատական ծանուցագրերի պահանջով: Հայցերի, ծառայության գործընթացի կամ դատական ծանուցագրերի հետ կապված լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարեք (213) 974-1440 հեռախոսահամարով:

Շրջանի Կանոնադրություն

Հասանելի է՝ bos.lacounty.gov/Services/Customer-Service-Center: Բնակիչները հաստատել են Կանոնադրությունը 1913 թվականին՝ Նահանգիիրավունքի շրջանակներում կառավարման ավելի մեծ ազատություն տրամադրելու համար: Այս տարիների ընթացքում կատարվել են ընտրողների կողմից հաստատված որոշ փոփոխություններ:

Գնահատման Բողոքարկման Խորհուրդ

Kenneth Hahn Վարչական Կենտրոն

500 W. Temple St., B-4, Los Angeles 90012

Հեռ.՝ (213) 974-1471, Հեռախոս (TTY/TDD) (800) 735-2929

Կայքը՝ bos.lacounty.gov/Services/Assessment-Appeals

Առաջնորդվելով Կալիֆորնիա Նահանգի Սահմանադրության 13-րդ հոդվածի իրավասությամբ՝ Վերահսկիչների խորհուրդը ստեղծեց գնահատման բողոքարկման հինգ խորհուրդներ՝ որպես Լոս Անջելեսի Շրջանում Հավասարության Ապահովման տեղական խորհուրդ (Board of Equalization): 2021 թվականի հունվարից ուժի մեջ է մտել Կալիֆորնիայի Եկամուտների և Հարկային Օրենսգրքի 1621-ը բաժինը, որը թույլ տվեց ավելացնել գնահատման բողոքարկման խորհուրդների քանակը՝ յուրաքանչյուր տարի ստացվող բողոքների մեծ ծավալը լուծելու համար:

Գնահատման բողոքարկման խորհրդի գործառույթն է անաչառ լուծման անցկացնել գույքի սեփականատերերի կողմից ներկայացված բողոքների վերաբերյալ, ովքեր ձգտում են նվազեցնել գնահատողի կողմից իրենց գույքի սահմանված գնահատման չափը: Այս լուծմանին ներկայացված ապացույցների հիման վրա խորհուրդը որոշում է գույքի գնահատման իրական շուկայական արժեքը: Խորհուրդն օրենքով պարտավոր է քննարկել և վերջնական որոշում կայացնել բողոքի վերաբերյալ դիմումը ժամանակին ներկայացնելուց հետո երկու տարվա ընթացքում:

Դիմումների Ներկայացման Ժամկետները

- **Հերթական Գնահատումներ:** Անշարժ և անձնական գույքի հերթական գնահատման (տարեկան հարկային օրինագծի համաձայն) վերաբերյալ բողոքների ներկայացման ժամկետը յուրաքանչյուր տարվա հուլիսի 2-ից Նոյեմբերի 30-ն է:
- **Լրացուցիչ Գնահատումներ:** Ներկայացման ժամկետը կազմում է 60 օր՝ փոստային առաքման օրվանից կամ լրացուցիչ գնահատման մասին ծանուցման փոստային կնիքի կամ հարկային օրինագծի փոստային կնիքի վրա նշված օրվանից հետո՝ որն ավելի ուշ է:
- **Գնահատման Ցուցակի Փոփոխություն/Ճշգրտումներ/Քացրողումներ:** Ներկայացման ժամկետը կազմում է 60 օր՝ փոստային առաքմամբ փոփոխության/ճշգրտումների/քացրողումների մասին ծանուցման Նամակի փոստային կնիքի կամ հարկային օրինագծի փոստային կնիքի վրա նշված օրվանից հետո՝ որն ավելի ուշ է:
- **Դժբախտ պատահարի կամ բնական աղետի հետևանքով գույքի վնասման վերագնահատում:** Ներկայացման ժամկետը վեց ամիս է՝ գնահատողի կողմից

առաջարկված վերագնահատման մասին ծանուցումն ուղարկելու օրվանից հետո: Եթե ներկայացման վերջնաժամկետն ընկնում է շաբաթ, կիրակի կամ օրենքով սահմանված արձակուրդի օր, ապա հաջորդ աշխատանքային օրը փոստով ուղարկված և կնիքված դիմումը կհամարվի ժամանակին ներկայացված:

- **Առցանց Դիմում:** Առցանց ներկայացված դիմումները պահանջում են Էլեկտրոնային ստորագրության նույնականացում՝ Գնահատման Բողոքարկման Խորհրդի Զարտուղարի կողմից սահմանված ընթացակարգի համաձայն:

Լսումների Գործընթաց: Դիմումատուի և գնահատողի կողմից նիստում ներկայացված ապացույցների հիման վրա Գնահատման Բողոքարկման Խորհուրդը որոշում է այն գույքի իրական շուկայական արժեքը, որի համար ներկայացվել է արդար գնահատման դիմում: Խորհուրդը կարող է ավելացնել կամ նվազեցնել անհատական գնահատումները՝ համապատասխան բազային տարվա համար գույքի ամբողջական դրամական արժեքը սահմանելու համար: Խորհուրդը իրավասություն չունի տրամադրելու հարկային արտոնություններ կամ ազատելու արտոնություններից կամ գույքահարկից ազատելու պահանջը, կամ քննարկելու պնդումները, թե գույքահարկի վճարումից ազատման պահանջը ոչ արդարացիորեն մերժվել է: Խորհուրդը գործում է գրեթե դատավորին համարժեք լիազորություններով և կայացնում է որոշումներ միայն նիստին ներկայացված պատշաճ ապացույցների հիման վրա:

Բացի այդ, դիմումատուն կարող է ներկայացնել գրավոր դիմում Լսումների Պատասխանատու Անձանց Ծրագրի Ծրջանակներում գնահատման վերաբերյալ բողոքների ոչ պաշտոնական լուսն անցկացնելու համար: Այս ծրագիրն ապահովում է արագացված գործընթաց, որի ընթացքում որակավորված (քննարկվող) գույքի վերաբերյալ բողոքները կարող է լսել գնահատման բողոքարկման լուսնների պատասխանատուն՝ գնահատման բողոքարկման Խորհրդի պաշտոնական լուսնների փոխարեն: Որակավորված գույքը ներառում է մեկ ընտանիքի համար նախատեսված բնակելի տները, համատիրության շենքերը, կոոպերատիվները կամ չորս կամ պակաս բնակարան ունեցող բազմաբնակարան բնակելի տները՝ անկախ արժեքից: Լսումների պատասխանատուի կողմից լսման առարկա հանդիսացող այլ գույքի գնահատված արժեքը չի կարող գերազանցել ընթացիկ գնահատման ցուցակով սահմանված 3 միլիոն դոլարը: Եթե դիմումատուն/գնահատողը համաձայն չէ լուսնների պատասխանատուի առաջարկության հետ, դիմումատուն/գնահատողը պետք է գրավոր դիմում ներկայացնի Խորհրդի կողմից լսման համար՝ լուսնների պատասխանատուի առաջարկության օրվանից 14 օրվա ընթացքում: Խորհուրդը կաշկանդված չէ լուսնների պատասխանատուի հաշվետվությամբ և առաջարկությամբ և կարող է ընդունել կամ մերժել առաջարկությունը: Գնահատման Բողոքարկման Խորհրդի որոշումները վերջնական են, քանի դեռ չեն բողոքարկվել Առաջին Ատյանի Ընդհանուր Իրավասության Դատարանում:

Հանրակրթական Սեմինար: Այս ծրագիրը մշակվել է, որպեսզի օգնի հարկ վճարողներին ավելի լավ հասկանալ գնահատման բողոքարկման գործընթացը: Այս առցանց սեմինարները, որոնք անց են կացվում ամսվա յուրաքանչյուր երրորդ չորեքշաբթի օրը, տրամադրում են տեղեկություններ բողոքարկման իրավունքի մասին՝ ինչպես և երբ ներկայացնել գնահատման արժեքի նվազեցման դիմումը, ինչպես պատրաստվել լուսններին, ինչ է ընդունելի ապացույց, ինչ է տեղի ունենում լուսնների ժամանակ, և ինչ ակնկալել լուսններից հետո: Սեմինարները հասանելի են բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են ծանոթանալ բողոքարկման գործընթացին, ներառյալ նրանց, ովքեր արդեն դիմում են ներկայացրել Գնահատման Բողոքարկման Խորհուրդ: Չանգահարեք (213) 974-1471 հեռախոսահամարով կամ այցելեք bos.lacounty.gov/Services/Assessment-Appeals:

Հարկային Գնահատողը, Աուդիտոր-Հսկիչը, Գանձապետարանը և Հարկահավաք Մարմինը և Գնահատման Բողոքարկման Խորհուրդը պատրաստել են գույքահարկի վճարման հարթակ՝ հարկ վճարողներին Լոս Անջելեսի Ծրջանում գույքահարկի գործընթացի

վերաբերյալ ընդհանուր և որոշակի մանրամասներ տրամադրելու համար: Այցելեք lacountypropertytax.com:

Շրջանում Արդար Գործելակերպի Վերահսկման Խումբ

500 W. Temple St., B-28, Los Angeles 90012.....ceop.lacounty.gov
Հեռ.՝ (213) 974-9868, Թեթ Գիծ՝ (855) 999-CEOP (2367)

Վերահսկում իրականացնող անկախ մարմին՝ կազմված աշխատակազմի իրավունքի մասնագետներից, որոնք իրավասու և պատասխանատու են աշխատավայրի բողոքները վերանայելու և քննություններ իրականացնելու համար, որոնք ներառում են նահանգային կամ դաշնային օրենքներով պաշտպանության ենթակա հարցերը՝ համաձայն Շրջանի Արդարության Գործելակերպի, ինչպես նաև առաջարկություններ է անում Շրջանի Վարչությունների Ղեկավարներին՝ վեճերի լուծման և/կամ համապատասխան ուղղիչ գործողությունների ձեռնարկման վերաբերյալ:

Գլխավոր Գործադիր Գրասենյակ (Chief Executive Office)

500 W. Temple St., Rm. 358, Los Angeles 90012

Կայք՝ ceo.lacounty.gov

Ընդհանուր Տեղեկությունների Համար՝ info@lacounty.gov

Շրջանի Հեռախոսավար (հասանելի է 24 ժամ)՝ (213) 974-1234 հեռախոսահամարով

Լրատվամիջոցի/Մամուլի Հետ Կապ՝ (213) 974-1311, pjo@ceo.lacounty.gov

Գլխավոր Գործադիր Տնօրենի ղեկավարությամբ՝ Գլխավոր Գործադիր Գրասենյակը վերահսկում է Շրջանի բազմամիլիարդանոց բյուջեի ձևավորման գործընթացը և համակարգում է Վերահսկիչ Խորհրդի հիմնական առաջնահերթությունների կատարումը: Գրասենյակը նաև վերլուծում և պաշտպանում է նահանգային և դաշնային օրենսդրությունը, համակարգում է Շրջանային լրատվամիջոցների արձագանքները, սոցիալական կայքերի և վեբ-կայքերի բովանդակությունը, և ղեկավարում է ենթակառուցվածքային (կապիտալ) նախագծերը, ակտիվները, լիզինգը և տարածքների կառավարումը:

Ապահովում է Շրջանի ռազմավարական պլանավորումը և կատարողականի չափումը, համակարգում է արտակարգ իրավիճակների նախապատրաստման աշխատանքները և խոշոր արտակարգ իրավիճակներից և աղետներից հետո ծախսերի վերականգնման գործընթացը, վերահսկում է ապահովագրական ծրագրերը և լուծում է ոչ ինքնավար շրջանների խնդիրները: Գործարկում է Շրջանի աշխատակիցների հետ հարաբերությունների ծրագիրը և փոխհատուցման/դասակարգման համակարգերը, մատուցում է ռիսկերի կառավարման ծառայություններ, ներառյալ աշխատողների փոխհատուցումը, առողջության և հաշմանդամության նպաստները և կորուստների կանխարգելումը: Վերահսկում և համակարգում է Շրջանի Ալիքը (County Channel), ինչպես նաև վերահսկում է ոչ ինքնավար տարածքներում գործող կաբելային հեռուստաընկերությունները: Մշակում է տեղեկատվական տեխնոլոգիաների նախագծերի որակի չափանիշներ և կառավարում է տեղեկատվական անվտանգության չափանիշները՝ Շրջանի թվային ակտիվները պաշտպանելու համար:

Բաժինները

Վարչական Ծառայություններ (Administrative)

Ակտիվների Կառավարում (Services Asset)

Բյուջե և Գործառնություններ (Management Budget and Operations)

Շրջանային Հաղորդակցություններ (Countywide Communications)

Օրենսդրական Գործեր (Legislative Affairs)

Ծրագրերի Իրականացման Համապատասխանություն (Policy Implementation Alignment)
Ռիսկերի Կառավարում (Risk Management)

Նախաձեռնություններ և Առաջնահերթություններ

Հակառասիզմի, Բազմազանության (Բազմազգ) և Ներառական Նախաձեռնություն
(Anti-Racism, Diversity and Inclusion Initiative).....raceequity@ceo.lacounty.gov
Ազատագրման Ալլերնատիվներ
(Alternatives to Incarceratio).....ATI@lacounty.gov
Թվայնացված Բաժանման Տարածաշրջանային Ռազմավարություն
(Digital Divide Regional
Strategy).....digitaldivide@lacounty.gov
Անօթեանների Նախաձեռնություն.
(Homeless Initiative).....homeless.lacounty.gov
Աղքատության Հաղթահարման Նախաձեռնություն
(Poverty Alleviation Initiative).....pai@ceo.lacounty.gov
Կանանց և Աղբյուրների Նախաձեռնություն
(Women and Girls Initiative).....ceo.lacounty.gov/wgi/

Երեխաների Աջակցության Ծառայություններ **(Child Support Services)**

5770 S. Eastern Ave., Commerce 90040-2924

Կայք՝ cssd.lacounty.gov

24/7 Դեպքի Մասին Առցանց Տեղեկություն՝ cse.ca.gov/CustomerConnect/login

Երեխաների Աջակցության Ծառայությունների Կարչությունը (CSSD) աջակցում է ծնողներին իրենց երեխաների կարիքների ապահովման հարցում, ներառյալ ծնողական իրավունքի ճանաչումը և երեխաների համար ֆինանսական և բժշկական աջակցության սահմանումը և տրամադրումը: CSSD-ը հայտնաբերում է ծնողներին, փոփոխում է դատական որոշումները, հավաքագրում և բաշխում է դատարանի կողմից սահմանված աջակցությունը (ալիմենտ) և համագործակցում է այլ Շրջանների, Նահանգների և երկրների հետ՝ երեխաների աջակցություն ստանալու համար: CSSD-ը համագործակցում է համայնքային կազմակերպությունների և Շրջանային այլ գործակալությունների հետ, որոնք տրամադրում են աշխատանքի ուսուցում/վերապատրաստում, աշխատանքի տեղավորում, փոխադարձ խորհրդատվություն (peer counseling) և ծնողներին աջակցող ծնողական դասընթացներ, որոնք հնարավորություն են տալիս նրանց հուզական, ինչպես նաև ֆինանսական աջակցություն ցուցաբերել իրենց երեխաներին:

Երեխաների Աջակցության Ծառայությունների Հաճախորդների Կոնտակտային

Կենտրոն.....(866) 901-3212

CSSD-ի Գրասենյակների Հասցեները

Բաժին I 7555 Van Nuys Blvd., Van Nuys 91405

Բաժին II 5500 S. Eastern Ave., Commerce 90040

Բաժին III 3179 W. Temple Ave., Pomona 91768

Բաժին IV 8300 S. Vermont Ave., 2-րդ հարկ, Los Angeles 90044

Բաժին V 20221 S. Hamilton Ave., Torrance 90502

Բաժին VI 42281 10th St. West, Lancaster 93534

Միջնահանգային Բաժին 5500 S. Eastern Ave., Commerce 90040

Նահանգային Հատկացումների Կենտրոն.....(866) 901-3212

Փոստարկը՝ 989067, West Sacramento 95796-9067

Երեխաների և Ընտանեկան Ծառայությունների Վարչություն (Children & Family Services)

Կայք՝ dcfs.lacounty.gov.....(213) 351-5507
Երեխաների Նկատմամբ Բռնության / Երեխաների Պաշտպանության Թեժ Գիծ
.....(800) 540-4000

Բելվեդերում DCFS-ի Տարածաշրջանային Գրասենյակներ (323) 725-4401
5835 S. Eastern Ave., 2nd Fl. Commerce 90040

Քոմիթոն-Քարսոն..... (310) 233-1000
1 Civic Plaza Dr., Ste. 100, Carson 90745

Էլ Մոնտե.....(626) 455-4660
4024 N. Durfee Ave., El Monte 91732

Գլենդորա.....(626) 691-1692
725 S. Grand Ave., Glendora 91740

Հոթթրև.....(323) 290-8060
5100 Goldleaf Circle, Los Angeles 90056

Լանքասթեր.....(661) 471-1369
300 E. Ave K-6, Lancaster, 93535

Մետրո Լոռթ.....(213) 763-1440
1933 S. Broadway, Suite 6, Los Angeles 90007

Փալմդեյլ.....(661) 223-4200
39115 Trade Center Dr., Ste. 130, Palmdale 93551

Փասադենա.....(626) 229-3500
532 E. Colorado Blvd., Pasadena 91101

Պոմոնա.....(909) 802-1302
801 Corporate Center Dr. Pomona 91768

Սանտա Կլարիտա.....(661) 702-6262
28490 Avenue Stanford, Ste. 100, Santa Clarita 91355

Սանտա Ֆե Սպրինգս.....(562) 903-5000
10355 Slusher Dr., Ste. 11, Santa Fe Springs 90670

Ջարավային Շրջան.....(562) 497-3500
4060 Watson Plaza Dr., Lakewood 90712

Տորանս.....(310) 972-3111
2325 Crenshaw Blvd., Torrance 90501

Վան Նույս.....(818) 904-8300
7555 Van Nuys Blvd., Van Nuys 91405

Վերմոնտ Կորիդոր.....(323) 965-7060
8300 S. Vermont Ave., 4th Fl., Los Angeles 90044

Ուոթերբրիջ..... (323) 290-8500
5100 W. Goldleaf Circle, Los Angeles 90056

Արևմտյան Լոս Անջելես.....(323) 900-2222
5757 Wilshire Blvd., Ste. 200, Los Angeles 90036

Ուեսթ Սան Ֆերնանդո Վեյլի.....(818) 717-4002
20151 Nordhoff St., Chatsworth 91311

